

ներուն դէմ, Արեւելքէն ու Արեւմուտքէն, մասնաւոր այն տկարութեամբ ալ արեւմտահայ լեզուին ու անոր շատ նրբացած գրագէտներուն դէմ, որոնցմէ մէկը կ'ընդունէր արմաշական առաջնորդը, անտեղի կերպով: Զօրաւոր անոր հմայքը մեր Մաթիկին վրայ, որ կը զոյճար Պելճիկի գիծը առած ըլլալուն, փոխանակ Ատաբազարին, ուրկէ անիկա ուխտ ունէր տեսնելու անոր ուսուցիչը, Դուրեան սրբազանը, որուն կարողութիւնները կը գնահատէր, ազդուելով աշակերտէն: Ընկեր Մաթիկը կը ծանրանար ժողովրդական առաջնորդին բազմատեսակ յատկութիւններուն վրայ, մասնաւորապէս սիրելով անոր մէջ եռանդի, շարժումի մարդը: Անիկա խանդավառ էր նաեւ անոր աննախապաշար միտքովը, որ մեր պայմաններուն մէջ, հաւատքը կը նետէր երրորդական, չորրորդական փլանի, առաջինին հանելով կազմակերպական, շինարար տուրքեր: Այժմ ու առաջնորդները, ժողովուրդի իրական վարիչները, այնքան կարեւոր՝ մերինին նման կրօնական համայնքի մը տնտեսումին, չէին կրնար զինաւորուիլ անջիղ առաքինութիւններով, որոնք ճգնողական բերքերը, կիսավայրի իմացականութիւնները ու բարբարոս պետերը կը ձգէին իրենց հմայքին ներքեւ: Հին դարերու սրբազան հայրապետ մը այսօր աւելորդ պերճանք կը նկատուէր: Ընկեր Մաթիկը զգոյշ եղաւ մօտենալէ ուրիշ կալուածի, այսինքն՝ դասական, անխուսափելի բամբասանքին, որ մեր կողմը խնամքով յարգարուած միջնորդատ մըն է, պարուրելու, խղելու պաշտօնով՝ ամէն եռանդուն կամ իր գործին նախանձորդ աշխատաւոր, մեզի պէս դանդաղ, շարժումէ աղքատ զանգուածի մը մէջ: Առանց հաւատքի եկեղեցականութեան վարկա՞ծը: Մաթիկը անծանօթ չէր եկեղեցիներուն պատմութեան: Ու կարեւոր կը նկատէր զանգուածին շահը անհատին կատարելատիւ որբացումէն: Երկինքին համար երջանիկներ, սուրբեր պատրաստելը աւելի չէր արժեք երկրին վրայ քիչ-շատ տանելի պայմաններ ստեղծելէն ժողովուրդի մը, որ ծարաւն ունէր հանգիստի, հացի: Ընկեր Մաթիկը չէր